

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սախալին կղզու գրաւումը.—խաղաղութեան բանակցութիւնները.—ժրանս-գեր-
մանական յարաբերութիւնները.—քէօկրասիա.—Բեկլիւ:

Խաղաղութեան մասին բանակցելու համար Ռուսաստանի կողմից լիազօր է նշանակուած Ս. Ի. Վիտտէ, որ խաղաղասէր կուսակցութեան ներկայացուցիչ է համարուում: Ճապոնիայի կողմից նշանակուած է արտաքին գործոց մինիստր բարօն Կամուրա, որի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնը պէտք է վարի կոմս Կատցուրա: Մաքաուդ երկու պետութիւնների լիազօրները Վաշինգտօնում պէտք է սկսեն խաղաղութեան կնքելու բանակցութիւնները: Ճապոնիան շարունակուած է առաջ մղել իր յաղթական պատերազմը: Յունիսի 14-ին ճապոնացիները, համարեա առանց ընդդիմադրութիւն գտնելու ռուսների կողմից, գրաւեցին Սախալին կղզու հարաւային ափը: Բնական հարստութիւններով հռչակուած այդ կղզին բաժանուած է Սիբիրիայի մայր ցամաքից Թաթարեան նեղուցով, իսկ ճապոնական Նսօ կղզուց Լապերուզեան նեղուցով: Հիւսիսից հարաւ ձգուած այդ նեղ կղզու երկայնութիւնը մօտաւորապէս բռնում է Բաթումից մինչև Բագու եղած տարածութիւնը (850 վերստ), իսկ լայնութիւնը տեղ տեղ հասնում է 183 վերստի, իսկ ամենանեղ մասերում հաւասար է միայն 24 վերստի: Մինչև 1885 թուականը Սախալինի հարաւային մասը պատկանում էր Ճապոնին, այդ թուականից անցաւ Ռուսաստանին, փոխարինուելով Կուրիլեան կոչուած մի քանի կղզիների հետ: Գրաւելով Սախալինը ճապոնացիները երեւի կը վերցնեն նրա հիւսիսային մասի դիմաց, Սիբիրիայի ցամաքի վրայ, Ամուր գետի բերանի մօտ գտնուող Նիկոլաեվսկ ամրութիւնը և հեշտութեամբ կը դիմաց հարաւ այդ գետով և կը հասնեն Խաբարովսկ, որ գտնուած է այն կէտում, ուր Ուսսուրին թափուած է Ամուրի մէջ: Այն ժամանակ Վլադիվոստոկը հիւսիսից կտրուած կըլինի Սիբիրիայի միւս մասերից: Միաժամանակ

ճապոնացիները սկսել են գործողութիւններ վարել ռուստոկի հա-
րաւային կողմից, Կորէյական սահմաններից:

Տոկիօից Յուլիսի 5-ին խիստած հեռագրից իմանում ենք
որ Կամիմուրայի նաւատորմի մի խումբ ռմբակոծել է ռուսնե-
րի դիրքերը Կորէյայի հիւսիս-արեւելեան ափերի մօտ և ստիպել
նրանց յետ նահանջել: Արեւմուտքից ևս ճապոնացիները սպառ-
նում են կտրել վարելով ռուստոկը Յարբինից. Օյամայի ծրագրի
զարգացումը այդ է ցոյց տալիս: Այդպիսով մինչև իր սկսուեն
խաղաղութեան վերադարձաւ բանակցութիւնները վաշինգտո-
նում՝ գուցէ արդէն պաշարւած լինի վարելով ռուստոկը:

Ֆրանս-գերմանական յարաբերութիւնները Մարոկկօի
հարցի առիթով մի ժամանակ սպառնական կերպարանք էին
ստացել, սակայն այդ երկու ամենաքաղաքակիրթ ազգերի հա-
սարակական կարծիքը աւելի խաղաղասիրական և հեռատես հան-
դիսացաւ, քան դրանց դիպլոմատիայի ներկայացուցիչներինը:
Ֆրանսիան ժամանակին կարողացաւ հեռացնել ֆլամասկար մո-
սիօ Դեկասսէին, իսկ գերմանական սոցիալ-դեմոկրատների
բռնած ընթացքը այդ խնդրում բաւական սառն ջուր ածեց
գերման դիպլոմատիայի ռազմասէր տրամադրութեան վրայ:
Ինչպիսիք Բերեկ—Ժորեսեան ճառերը լսելուց լաւագոյն համա-
րեց խաղաղ ընթացք տալ դիպլոմատիական բանակցութիւն-
ներին. Ֆրանսիական արտ. դ. մինիստր Բուլիէն և գերմա-
նական դեսպան իշխան Բադուին համաձայնեցին հարցը են-
թարկել միջազգային կոնֆերենցիայի քննութեան: Այդպիսով
Բուլիէն աշոգութեամբ կարողացաւ դուրս գալ այն դժուար
դրութիւնից որ ստեղծել էր նրա նախորդ Դեկասսէն, Հանատօի
այդ համախոհը: Եւ այժմ Ֆրանսիան կարող է հանգիստ նուի-
րուել իր ներքին կեանքի վերաշինութեան, որի ամենամեծ
խնդիրը՝ եկեղեցին պետութիւնից բաժանելը՝ անցաւ ազգային
ժողովում, ստանալով 108 ձայների մեծամասնութիւն: Կղերա-
կան վտանգից ազատուած հանրապետութիւնը այսուհետեւ կա-
րող է աւելի հանգիստ սրտով ձեռնարկել սոցիալական մեծ
րեֆորմներ: Պատմական այդ մեծ քայլով Ֆրանսիան ընդ միշտ
ազատուեց այն կորստաբեր ճանապարհից, որ տարաւ կղերա-
կան Սպանիային դէպի կործանում: Քրիստոնէական թէօկրա-
տիան յանձին կաթոլիկութեան նոյն դերը կատարեց Սպա-
նիայում, ինչ իսլամ թէօկրատիան բոլոր մահմեդական երկր-
ներում: Ամեն մի թէօկրատիա, լինի նա քրիստոնէական թէ
մահմեդական, ազգերի առաջադիմութիւնը ոչնչացնող մի երե-
ւոյթ է, որի դէմ մաքառողները ազատութեան անմահ ռահվի-

բաներ են: Ուրեմն, ի՞նչ ասել այն խղճուկ թուրք «հրապարակախօսների» մասին որ 20-րդ դարում վեր են կենում և՛ հրով ու սրով իր վարդապետութիւնը տարածող Ղուրանի սկըդրունքներով ուզում վերածնել մի տգէտ և բարբարոս ազգ, ի՞նչ ասել համալսմական թէօկրատիա երազողներին—գիտութիւնը և հասարակութիւնը կրօնական ճիրաններից ազատագրող մեր դարում...

Այժմ իսլամ պետութիւններից ամենաուժեղը թիւրքիան է, որի սպանիչ լուծից ազատուած ազգերը հսկայական առաջադիմութիւն արին, մինչդեռ նոյն լուծի տակ հեծող երկրների բնակիչները բնաջինջ են լինում, օրէցօր աւերւում են ու քանդոււմ ենք: Բնիկ ղազախութիւնից կամ աւելի ճիշտն ասած իշխանութեան անսահման կամայականութիւնից: Մակեդոնիան և թիւրքաց Հայաստանը արիւնաքամ և սովամահ են լինում «բարեխնամ» թիւրք կառավարութեան շնորհիւ: Եւ այդ անտանելի կարգերի դէմ բողոքողները մեղաւոր են համարւում համալսմական ֆանտազիաներով ոգևորւած թիւրքական դժոխքից դուրս ապրող թուրք-թաթար «հրապարակախօսները» և «երեկիւնները»: Տարօն և Վասպուրական քարուքանդ եղան, թշուառ ռայան մորթոտուեց Եւրոպայի աչքերի առաջ և հայ ժողովրդի թշուառ մնացորդները այժմ սովամահ են լինում, իսկ դեռ կան մարդիկ, որոնք հաւատում են որ ընդունակ է թիւքիան իր սեփական ուժերով վերածնուել, մոռանալով որ իսլամը աւելի հասարակական-քաղաքական մի քարացած սիստեմ է ներկայացնում, քան զուտ կրօնական վարդապետութիւն: Միջին դարերի կաթոլիկ թէօկրատիան աշխատում էր, իբրև հասարակական-պետական մի սիստեմ, բռնանալ քրիստոնէութիւն դաւանողների վրայ: Եւ այդ ձգտման ջախջախումով միայն ազատ շունչ քաշեց Եւրոպան: Նոյն ուղղութեամբ պէտք է գործեն մահմեդական ազգերը, որոնք ճնշուած են իսլամ թէօկրատիայի լծի տակ: Այդ կղերական Վեդեր պատելով միայն կարող է բողոքել նոր կեանքը: Եւ արարները հասկացել են այդ, ինչպէս առիթ ունեցանք խօսելու մեր նախընթաց տեսութիւններից մէկում:

Նորերս վախճանուեց մի մեծ մարդ, որ ազատ էր որեւէ կրօնական—ազգային նախապաշարմունքներից և իրան նուիրել էր մեր երկրագնդի մակերևոյթի ուսումնասիրութեան: Դա ժակէլիզէ Բեկլին էր, նոր ժամանակների ամենամեծ աշխարհագիրը կամ գեօգրաֆը: «Երկիր» և «Լնդհանուր աշխարհագրու-

թիւն»—ահա նրա բազմահատոր դիտական աշխատութիւնները։ Իրրե քաղաքացի նա իր ծայրայեղ արմատական հայեացքների շնորհիւ իր կեանքի մեծ մասը պէտք է անցկացնէր հայրենի Ֆրանսիայից դուրս։ Այդ 75 ամեայ բարի և ազնիւ ծերունին իր քաղաքական համազումներով անիշխանական (անարխիստ) էր, թէև միաժամանակ հակառակ էր այդ վարդապետութիւնը ահաբեկիչ գործունէութեամբ տարածելու եղանակին։ Նրա կարծիքով բուն մարդկային քաղաքակրթութիւնը հաստատուած է ազատութեան և իրաւունքի վրայ։ 90-ական թուականներից նա դասախօսում էր Բելգիայի մայրաքաղաք Բրիւսսելի ազատ համալսարանում։ Մեր երկրագունդը այդքան լաւ ուսումնասիրած դիտնականը ազգերի պատմական էվոլիւցիայի մէջ ահագին դեր էր տալիս աշխարհագրական առանձնայատուկ պայմաններին...

Լ. Ս.

7 Յուլիսի